ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«20» հոկտեմբեր 2016թ. № 605-Հ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 667-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 2-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 2-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 667-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ և 5.1-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 2.1, 2.2, 2.3, 5.1, 5.2, 5.3, 5.1.1, 5.1.2, 5.1.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 7.2.6 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է <<Նույնականացման քարտերի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.>>.

2. Հրամանի 1-ին կետի 5.2-րդ ենթակետով հաստատված 5.2.1, 5.2.2, 5.2.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 5.2.3 կետերը ուժը կորցրած ճանաչել.

3. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ և 5.1-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5, 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 7.5 կետերում և դրանց վերաբերյալ կատարված հղումներում /footnote/, 7.6, 7.7, 8.1.4 կետերում, և 5.2-րդ

ենթակետով հաստատված 5.2.1, 5.2.2, 5.2.3, 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 5.3 կետերում <<ֆինանսների նախարարություն>> բառերը փոխարինել <<կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե>> բառերով՝ ըստ հոլովառության.

4. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ և 5.1-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5, 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 7.5 կետերի 3-րդ ենթակետը և 5.2-րդ ենթակետով հաստատված 5.2.1, 5.2.2, 5.2.3, 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 5.3 կետերի 2-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

5. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5, 5.1.6, 5.2.1, 5.2.2, 5.2.3, 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 6-րդ հավելվածներով սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերի <<Այլ պայմաններ>> բաժիններում ավելացնել նոր կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<պայմանագիր կնքած անձի /վաճառողի, կատարողի, կապալառուի/ կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն /գնորդը/, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ծանուցումն ուղարկում է պայմանագիր կնքած անձի /վաճառողի, կատարողի, կապալառուի/ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը /վաճառողը, կատարողը, կապալառուն/, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:>>.

6. Հրամանի 1-ին կետի 5.2-րդ ենթակետով հաստատված 5.2.1, 5.2.2, 5.2.3, հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի

1) 5.6, 5.7 և 5.7.1 կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ առանց փոփոխելու այդ կետերի վերաբերյալ կատարված հղումները /footnote/.

<<5.6 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն հրավերի 5.3 կետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների:

5.7 Սույն հրավերի 5.3 կետով նախատեսված տեղեկատվությունը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման

արդյունքների հաստատման նպատակով բացման նիստը շարունակվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Մասնակցի հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

5.7.1 հայտերի բացման օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկների երկուական օրինակ և Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով բացման նիստը շարունակվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Մասնակցի հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:>>.

2) 1-ին հավելվածներում <<5.3 կետի 1-ին ենթակետով>> բառերը փոխարինել <<5.3 կետով >> բառերով.

7. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 5-րդ ենթակետերով հաստատված 1.4, 1.5, 1.6, 2.4, 2.5, 2.6, 5.4, 5.5, 5.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 4.1.2 կետերը և 5.2-րդ ենթակետով հաստատված 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 3.1.2 կետերը <<առձեռն կամ փոստով>> բառերից հետո լրացնել <<կամ register@armeps.am էլեկտրոնային փոստի միջոցով>> բառերով.

8. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ և 5.1-րդ ենթակետերով հաստատված 1.4, 1.5, 1.6, 2.4, 2.5, 2.6, 5.4, 5.5, 5.6, 5.1.4, 5.1.5, 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 7.9 կետերը կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:>>.

9. Հրամանի 1-ին կետի 5.2-րդ ենթակետով հաստատված 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 5.9 կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<< Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:>>.

10. Հրամանի 1-ին կետի 5.2-րդ ենթակետով հաստատված 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի 5.6 և 5.7 կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ առանց փոփոխելու այդ կետերի վերաբերյալ կատարված հղումները /footnote/.

<<5.6 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն հրավերի 5.3 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների:

5.7 Սույն հրավերի 5.3 կետի 1-ին ենթակետով նախատեսված տեղեկատվությունը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով բացման նիստը շարունակվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Մասնակցի հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

5.7 հայտերի բացման օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկների երկուական օրինակ և Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով բացման նիստը շարունակվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Մասնակցի հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:>>.

11. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 23-ից:

Գ. Խաչատրյան